



«Փրկություն»
դրաման
ամբողջությամբ
ապրած...

4



Բոլոր
դռները

6



Սպառնալիք

7



Ամենամեծ եղջյուրները

8

ISSN 1829-149X

09005



9 771829 149003

ով իրագրելված է, նա տաշտոյանված է

արտակարգ թերթ

N 5 (278)

19.2.2009 - 25.2.2009

www.emergency.am

Փրկարարը

Էքսպրեմալությունը գրավեց...



«Սկզբում, երբ եկա փրկարար աշխատելու, էքսպրեմալությունն ինձ գրավեց, բարձրությունների հետ կապված աշխատանքը, հետո... հետո արդեն «հիվանդացա» (ժպտում է): Սա «հիվանդություն է», տանը, թե

դրսում, աշխատանքի մեջ, թե աշխատանքից դուրս ապրում ես փրկարարությամբ...», - պատմում է գործով վարակված, տասը տարի առաջ փրկարարների աշխարհ ոտք դրած Արման Վարդանյանը:

- Առաջին կանչը, որ հիշում եմ, մի տուն էր. նկուղը ջուր էր լցվել: Այն ժամանակ մեկ ու կես անսվա աշխատող էի, տեխնիկային լավ չէի տիրապետում, չգիտեի գործիքների հնարավորությունները, եւ ինձ մեծ զարմանք պատճառեց, թե ինչպես մի գործիքով մեկ-մեկուկես ժամվա ընթացքում նկուղն ամբողջությամբ դատարկեցին ջրից: Ջարմացա ու սկսեցի հետաքրքրվել: Պարզեցի, որ շատ գործիքներ կան, որ հեշտացնում են մեր աշխատանքը, օրինակ՝ ավտովարի ժամանակ հիդրավիկա ենք օգտագործում. թույլների ընթացքում կտրում ենք մեքենան ու տուժածին դուրս բերում: Տասնամյա վաղեմությամբ այս պատմությունը փրկարար Արմանի կյանքում առաջինը, բայց տպավորիչներից վերջինը չէ: Նրա մտքում գրանցված շատ դեպքեր կան՝ ինչպես թեթեւ, այնպես էլ բարդ ու վտանգավոր: >>> 7

Հայերը Մոլդովայում



Փետրվարի 9-13-ը ՆԱՏՕ-ի քաղաքացիական-ռազմական աղետների պատրաստվածություն (ՔՌԱՊ) գործակալության եւ ԱՄՆ ինժեներական գործերի կողմից Սեւոստյան նախաձեռնության շրջանակներում Մոլդովայի Հանրապետության մայրաքաղաք Քիշնևեում անցկացվեց «Կողմի 2009» շտաբային վարժանք, որին մասնակցեցին ՀՓԾ միջազգային համագործակցության վարչու-

թյան պետ, փ/ծ գնդապետ Ա. Ավագյանը, ՕԿԿ պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Ա. Դավթյանը, ՕԿԿ տարածքային ստորաբաժանումների գործունեությունը համակարգող բաժնի պետ, փ/ծ փոխգնդապետ Տ. Գիդայանը եւ ԲՏՊԿ տեխնածին վթարների բաժնի պետ, փ/ծ փոխգնդապետ Կ. Կարապետյանը: Վարժանքին մասնակցում էին Ռուսիայի, Թուրքիայի,

Վրաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի, Մոլդովայի պատվիրակությունները, ՆԱՏՕ-ի եւ ԱՄՆ-ի ինժեներական կորպուսի աշխատանքային խմբերը: Բոլոր պատվիրակությունները վարժանքին նախորդող 1,5 օրանոց սեմինարին ներկայացան ելույթներով: Հայկական պատվիրակության ելույթը «Սպիտակի երկրաշարժի դասերը» թեմայով էր: Վարժանքի նպատակն էր՝ միջազգային օգնության հայցման եւ տրամադրման հարցում կատարելագործել հմտություններն ու ունակությունները: Վարժանքը նախատեսված էր անցկացնել 4 փուլով, ամեն փուլի համար ընտրված էին տարբեր արտակարգ իրավիճակներ Մոլդովայի տարածքում (երկրաշարժ, քիմիական օբյեկտի վթար, հանքախորշի փլուզում, ահաբեկություն), որոնց մասնակից պետությունները պետք է համապատասխան արձագանքում կազմակերպեին: Պատվիրակություններին տրամադրվեցին առանձին սենյակներ, որտեղ պետք է խաղարկեին իրենց երկրի ճգնաժամային կառավարման կենտրոնի աշխատանքը: >>> 4

Այս եւ մյուս շաբաթ օրերին, ժամը 15.30-ին, Հ2 հեռուստաընկերության եթերում «Արտակարգ ալիք» հաղորդաշարն է:

Փետրվարի 21-ին կարող եք դիտել.

Ովքեր են պատասխանատու եւ ում ենք շնորհակալ ժամանակին օգնություն ստանալու համար, ովքեր են օր ու գիշեր մտածում մեզ արտակարգ իրավիճակներից հնարավորինս հեռու պահելու մասին...

Թե ինչպես բնապահպան Արման Վարդանյանը դարձավ փրկարար ու տարվեց այդ գործով, ինչ անել, երբ կյանքն ընկերոջը ձեռքբերում է, մինչ դեպի վայր հասնելը մշակել պլաններ ու փորձել իրագործել դրանք, փրկարարի օրն ու կյանքը մեկ դեմքով՝ Արման Վարդանյան...



Շնորհ գազն օրգանիզմ է ներխուժում աննկատ ու նենգաբար, նույնիսկ չէք էլ զգում նրա ներկայությունը, իսկ նա կարող է մահացու լինել...

Այս եւ այլ թեմաների մասին՝ շաբաթ, 15.30-ին, Հ2-ի եթերում:

«Էլիտ գրուպ» առաջարկում է կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Դուք ցանկանում եք լավագույնը, շքեղն ու հարմարավետը, ապահովն ու անվտանգը, նախընտրում եք ճարտարապետական ինքնատիպ լուծումները, գերժամանակակից ինժեներատեխնիկական հագեցվածությունը, զարգացած ենթակառուցվածքը, բարձրակարգ սպասարկումը, ամենահարգին ու հեղինակավորը: Այլևս մի փնտրեք Ձեր ուզածն արտասահմաններում, այն, ինչ երազել եք, այսօր արդեն իրականություն է. «Էլիտ Գրուպ» Երեւանի կենտրոնում կառուցում է Ձեր երազանքը: Միակ ընկերությունը Հայաստանում, որն արժանացել է որակի կառավարման ISO 9001-2000 միջազգային ստանդարտի վկայագրի՝ թոփ մենեջմենթի բնագավառում: Ապահով, սեյսմակայուն եւ էլիտար շենքեր հատուկ Ձեզ համար: Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



Հայաստանի փրկարար ծառայություն զանգահարեք

1-01, 1-12

Փլուզում

Փետրվարի 12-ին, ժամը 11.45-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Նորագյուղ թաղամասի 267 տունը մասնակի փլուզվել է:

Դեպքի վայր են մեկնել Երեւանի փրկարարական վարչության Կենտրոնը համայնքային բաժնի պետը եւ համայնքի թաղապետարանի կոմունալ բաժնի աշխատակիցները: Պարզվել է, որ փլուզվել է Ն. Մարտիրոսյանին պատկանող տան՝ 90 քմ մակերեսով տանիքը: Թաղապետարանի կողմից տան հարակից փողոցը մաքրվել է փլատակներից:

Ձոռեր եւ վիրավորներ չկան:

Ինչ եղավ, երբ...

Փետրվարի 13-ին Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 12.55-ին Ազատան լճից նկատվում է ջրի արտահոսքի ուժեղացում, ինչի հետեւանքով հնարավոր է պատվարի փլուզում:

Պարզվել է, որ եղանակի տաքացման պատճառով լճի պատվարի միջնամասում տեղի է ունեցել սուֆոլիա, պատվարի միջնամասում առաջացել է 30 խմ խոռոչ եւ առկա է ջրի արտահոսք՝ 7-8 լ/վ

արագությամբ:

Առաջարկվել է ինժեներական տեխնիկայի միջոցով լճի ջրթորից մինչեւ Ջաջուռի հեղեղատար փորել մոտ 300 մետր երկարությամբ հեղեղատար, որի միջոցով կապահովվի լճից մոտ 60 լ/վ արագությամբ ջրի անվտանգ հեռացում:

Ազատան գյուղի ցածրադիր գոտում գտնվող տների բնակիչների հետ տարվել է բացատրական աշխատանք՝ արտակարգ իրավիճակների դեպքում անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ:

Նույն օրը մարզի Ազատան գյուղի բնակիչների ուժերով ձեռնարկվել են միջոցառումներ լճի պատվարի միջնամասում առաջացած խոռոչը փակելու եւ ջրի հետագա հոսքը դադարեցնելու ուղղությամբ: Ինժեներական տեխնիկայի մոտենալը վթարային տեղամասին վտանգավոր էր, եւ տվյալ հատվածն ամրացնելու համար մարդիկ ստիպված են եղել աշխատել ձեռքերով: Ելք է 10 խմ կավահող եւ 60 պարկ ավազ: Արդյունքում ջրի արտահոսքը դադարել է, սակայն իրավիճակը մնում է մտահոգիչ, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ գոյացած խոռոչը փակելու եւ հետագայում պատվարը լրիվ ամրացնելու համար: Գյուղապետարանի կողմից տարվում է ամենօրյա հսկողություն:

Շմուլ գագ

Փետրվարի 14-ին, ժամը 22.05-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Կոմիտասի պողոտայի 54-րդ շենքի 71 բնակարանի բնակիչը չի արձագանքում հեռախոսի եւ դռան զանգերին:

Դեպքի վայր մեկնած փրկարարները ոստիկանության բաժնի աշխատակիցների ներկայությամբ

բացել են բնակարանի դուռը, որտեղ անգիտակից վիճակում հայտնաբերել են 1973 թ. ծնված Գայանե, 1975 թ. ծնված Աստղիկ Սարգսյաններին եւ 2005 թ. ծնված Դավիթ Երեմյանին:

Շմուլ գագից թունավորման ախտանիշներով Գ. Սարգսյանը եւ Ա. Սարգսյանը տեղափոխվել են «Արմենիա» բժշկական կենտրոն, իսկ Դ. Երեմյանը տեղափոխվել է «Հայք» մանկական բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը բավարար է:

Դեպքի մասին տեղյակ է պահվել «1-04» ծառայությունը: Վերոհիշյալ բնակարանի գազամատակարարումը դադարեցվել է:

Դռան հեքելում

Փետրվարի 14-ին, ժամը 23.00-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Վարդանանց փողոցի 14-րդ շենքի 19 բնակարանի բնակիչը չի արձագանքում հեռախոսի եւ դռան զանգերին:

Դեպքի վայր մեկնած փրկարարները տանտիրոջ հարազատների ներկայությամբ բացել են բնակարանի դուռը, որտեղ ոտքի կոտրվածքով հայտնաբերվել է 1926 թ. ծնված Սիրանուշ Տեր-Սիմոնյանը:

Կեղծ ահազանգ

Փետրվարի 16-ին, ժամը 12.07-ին ահազանգ է ստացվել, որ Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 1 միջնակարգ դպրոցի տարածքում պայթուցիկ սարք է տեղադրված: Դեպքի վայր են մեկնել Արագածոտնի մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը, փրկարարական ջոկատը, մեկ մարտական հաշվարկ եւ ջրատար, ինչպես նաեւ Աշտարակի ոստիկանության եւ ԱԾՕ աշխատակիցները:

Ոստիկանության եւ ՄՓՎ ուժերով շրջափակվել է տարածքը, կազմակերպվել է դպրոցի աշխատակցների ու աշակերտների տարահանում:

տակիցների ու աշակերտների տարահանում: Ժամը 14.26-ին որոնողական աշխատանքներն ավարտվել են, պայթուցիկ սարք չի հայտնաբերվել:

Բրուցելոզ

Փետրվարի 18-ին, ժամը 10.18-ին Սննդամթերքի անվտանգության եւ անասնաբուժական պետական տեսչության Սյունիքի մարզային կենտրոնից տեղեկություն է ստացվել, որ մարզի Ծղուկ համայնքում խոշոր եղջերավոր անասունների մեջ գրանցվել է բրուցելոզ տեսակի հիվանդություն, որի գաղտնի շրջանը սկսվել է հունվարի 20-ից:

Մինչեւ փետրվարի 16-ը մորթի է ենթարկվել 101 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Համայնքի 15 բնակիչ վարակվել է տվյալ հիվանդությամբ, եւ ներկայումս տնային պայմաններում ստանում է ստացիոնար բուժում: Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը գնահատվում է բավարար:

Փետրվարի 17-ին Շիրակի մարզի Հարթաշենի գյուղապետը եւ անասնաբույժը Աշոցքի անասնաբուժական ծառայություն են ահազանգել, որ իրենց գյուղի բնակիչներին պատկանող խոշոր եղջերավոր անասունների մեջ կան վիժուների դեպքեր:

Քաղաքի անասնաբուժական ծառայության կողմից գյուղի 23 տներին պատկանող 672 գլուխ խոշոր եղջերավոր անասուններից վերցվել են արյան նմուշներ, որոնք ուղարկվել են լաբորատոր հետազոտման: Պարզվել է, որ 144 խոշոր եղջերավոր անասուն վարակված է բրուցելոզ հիվանդությամբ:

Հարկադիր մորթի է ենթարկվել 92 խոշոր եղջերավոր անասուն, իսկ 52-ի մորթը ընթացիկ մեջ է:

Շիրակի մարզի հիգիենիկ-հակահամաճարակային ծառայությունը Հարթաշեն գյուղի 37 բնակիչից,

որոնք անմիջական շփում են ունեցել հիվանդ անասունների հետ, վերցրել է արյան անալիզ՝ փորձաքննության ենթարկելու համար:

Փետրվարի 18-ի Շիրակի մարզի ՀՀՀՏ փորձագիտական կենտրոնից ստացված տեղեկությունից համաձայն՝ ժամը 16:30-ի դրությամբ Հարթաշեն համայնքում հարկադիր մորթի է ենթարկվել 123 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 44 բնակիչից վերցվել է արյան նմուշ, պատասխանը կլինի փետրվարի 23-ին, իսկ Շիրակի մարզի անասնաբուժական վարչության տվյալների համաձայն՝ իրենց ծառայության ուժերով համայնքում ամբողջությամբ ախտահանվել է 24 տուն, եւս 2 տուն ախտահանվել է մասնակի:

Բրուցելոզի մասին կարդացեք 5-րդ էջում:

Հրդեհներ
Անցած շաբաթ հանրապետության տարածքում գրանցվել է տարբեր բնույթի հրդեհների բռնկման 46 դեպք:

Խոյր, անասնակեր...

Փետրվարի 12-ին Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղի բնակիչ Ա. Դանիելյանին պատկանող տան բակում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է պահեստավորած 350 հակ խոտ:

Փետրվարի 17-ին Սյունիքի մարզի Աշտարակ գյուղում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են 4. Մաթեոսյանին պատկանող անասնագոմի ներքնահարկի առաստաղը՝ 40 քմ մակերեսով, տանիքային մասը՝ 10 քմ մակերեսով եւ 100 հակ անասնակեր:

Խոյրածակույթ

Փետրվարի 13-ին Տավուշի մարզի Աշաջուր գյուղի «Կարապետի յայլ» կոչվող համրամասում բռնկված >>> 3

միջազգային լուրեր

Ինքնաթիռն ընկել է բնակելի տների վրա

Անցյալ շաբաթ ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի Բուֆալո քաղաքի մերձակայքում վթարվել է մասնավոր մի ինքնաթիռ: Հայտնի է, որ 50 տեղանոց ինքնաթիռն ընկել է բնակելի թաղամասի վրա եւ բռնկվել: Վթարի զոհ են դարձել օդանավի 44 ուղեւորները, անձնակազմի չորս անդամները եւ վնասված տներից մեկի բնակիչը: Մի քանի տուժած դեպքի վայրից տեղափոխվել է հիվանդանոց:

Տոռնադո Վրաստանում

Փետրվարի 16-ին Վրաստանի արեւմտյան շրջաններում պատմության մեջ առաջին անգամ տեղի է ունեցել տոռնադո, ինչի հետեւանքով անտուն է մնացել 120

ընտանիք:

Ըստ ակամատների՝ մեկ բուրգի ընթացքում երկինքը մոայլվել է, եւ այնտեղից երկիր է իջել մորկայուն, որն արմատախիլ է արել բազմաթիվ ծառեր ու օդ բարձրացրել տների տանիքներ: Մարդկային զոհեր չեն եղել, տոռնադոն միայն նյութական վնաս է պատճառել:

Մարդիկ վախենում են ողբերգության կրկնությունից



Փետրվարի 15-ին Ռուսաստանի Աստրախանի մարզի Մոլոչյոմնի ավանում բռնկված հրդեհի հետեւանքով զոհվել է 18 մարդ: Այս անգամ կրակի թիրախ է դարձել հանրակացարանի երեք հարկանի

փայտյա շենքը:

Այրվող շենքից տարահանվել է 66 բնակիչ:

Ողբերգությունից հետո պարզվել է, որ 28 բնակարան ունեցող շենքը վթարային էր ճանաչվել դեռ անցյալ տարի, որից հետո այն պետք է քանդվեր: Սակայն այս ամենը չէր խանգարում շենքում բնակվողներից պարբերաբար զանձել կոմունալ վճարները: Այս սարսափելի հրդեհից հետո ավանի շատ բնակիչներ հրաժարվել են ապրել փայտյա տներում: Ու քանի որ ավանում այլ տներ չկան, մարդիկ պահանջում են անհապաղ վերաբնակեցնել հրդեհավտանգ ավանը:

Ըստ պաշտոնական վարկածի՝ հրդեհի բռնկման պատճառը կրակի հետ անզգույշ վարվելն է:

Հեռուստատեսության ընկել է 25-րդ հարկից եւ ողջ մնացել

Փետրվարի 17-ին չինացի մի հեռուստատեսությունալիստ, ընկնելով 25-րդ հարկից, ողջ է մնացել, թեւս ստացել է լուրջ մարմ-

նական վնասվածքներ:

Լրագրողն ընկել է առավոտյան ժամը 9-ի սահմաններում՝ բարձրահարկի տանիքում իրականացվող նկարահանումների ժամանակ: Տեղական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ նկարահանումների պահին ուժեղ քամի էր փչում: Այնուամենայնիվ, դեռեւս պարզ չէ, թե ինչն է դարձել լրագրողի ընկնելու պատճառ:

Տուժածը տեղափոխվել է հիվանդանոց: Բժիշկների գնահատմամբ՝ նրա վիճակը ծայրահեղ ծանր է:

Օլիմպիական ջեմպիոնը մահացել է մարզումների ժամանակ

Մրճանետման մարզաձեւի պատմության մեջ առաջին անգամ մարզումների ժամանակ մահացել է քանվեցամյա մրճանետորդուհի Կամիլա Սկոլիմովսկայան: Մարզումների ժամանակ նա հանկարծակի վատ է զգացել: Աղջկան տեղափոխել են հիվանդանոց, սակայն փրկել այդպես էլ չեն կարողացել:

Մարզիկը մահացել է Պորտուգալիայում, որտեղ լեհ թեթեւալեւտները մարզումներ են անցկացնում: Լեհ մրճանետորդը 17 տարեկանում հաղթել է 2000 թվականին Սիդնեյում տեղի ու-

նեցած Օլիմպիական խաղերում:

Խոլերայից հազարավոր մարդիկ են մահացել



Չինբաբվեում մոլեզոտ խոլերայի համաճարակն արդեն խլել է ավելի քան 3600 մարդու կյանք: Վտանգավոր հիվանդությամբ վարակված է մոտ 60 հազար բնակչություն:

Ինչպես հայտնում են առողջապահության համաշխարհային կազմակերպության ներկայացուցիչները, վերջին 14 տարվա ընթացքում սա Աֆրիկայում խոլերայի ամենամեծ համաճարակն է: Ըստ նրանց՝ համաճարակի պատճառն աղտոտված ջուրն է եւ գրեթե չաշխատող առողջապահական եւ սանիտարահիգիենիկ ծառայությունները:

Ֆախհա Թյունիբայան



արագ արձագանքման ծառայություններ



<<< 2 հրդեհի հետեւանքով այրվել են 3000 քմ մակերեսով խաղողի այգի եւ 6000 քմ մակերեսով խոտածածկ տարածք, իսկ Վանաձորի Աթաբեկյան փողոցի հյուսիսային մասի եւ Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհի 6-րդ կմ-ի աջակողմյան սարալանջերում՝ համապատասխանաբար 1 հա ու 5000 քմ մակերեսով խոտածածկույթ:

Փետրվարի 15-ին այրվել են Ալավերդի-Օծուն ավտոճանապարհի 10-րդ կմ-ին հարակից անտառում 2 հա խոտ եւ քփուտներ, երեւանի Օծակալ Իսակովի պողոտային հարակից «Գալմա-յի» այգիներում՝ 1 հա խոտ եւ եղեգ, Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհի 8-րդ կմ-ին հարակից անտառում՝ 6000 քմ մակերեսով խոտ եւ 10 եղեւնի, ինչպես նաեւ Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհի 10-րդ կմ-ին հարակից անտառում՝ 4000 քմ մակերեսով խոտ:

Փետրվարի 16-ին Գետափ-Մարտունի ավտոճանապարհի 4-րդ կմ-ին այրվել է 1000 քմ մակերեսով խոտատարածք:

Փետրվարի 17-ին Աշտարակ-Ագարակ ավտոճանապարհի 8-րդ կմ-ին՝ Շաղվերդ գետի ափին, երկու օջախով այրվել է 1000 քմ մակերեսով խոտածածկ տարածք:

Փետրվարի 18-ին Մեղրի-Երեւան ավտոճանապարհի 2-րդ կիլոմետրին հարակից տարածքում այրվել է 1500 քմ մակերեսով չոր խոտ:

Ճաշարանի եւ գործարանի փակում

Փետրվարի 13-ին, ժամը 20.17-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Կոտայքի մարզի Արթուրյանի 4-րդ միկրոշրջանի ուսանողական հանրակացարանում: Դեպքի վայր է մեկնել երեք մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 00.02-ին, մարվել՝ ժամը 00.51-ին:

Այրվել է ուսանողական հանրակացարանի նախկին ճաշարանի՝ 600 քմ մակերեսով տանիքը:

Նույն օրը, ժամը 12.08-ին հրդեհ է բռնկվել Բերդ քաղաքի Այգեստան 94 հասցեում գտնվող պանրի գործարանում: Դեպքի վայր է մեկնել երեք մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 12.25-ին, մարվել՝ ժամը 19.45-ին: Այրվել է տանիք՝ 400 քմ մակերեսով:

Երթուղային միկրոավտոբուս

Փետրվարի 15-ին երեւանի Դավիթբաշենի 4-րդ զանգվածի 50 շենքի բակում ամբողջությամբ այրվել է «ԳԱՁԵ» մակնիշի 1329 S պետհամարանիշով թիվ 13 երթուղային միկրոավտոբուսը:

Տնակ, փնակի փակում...

Փետրվարի 15-ին Վանաձորի Բագունի փողոցի 17 շենքի բակում ամբողջությամբ այրվել են Ս. Պողոսյանին պատկանող ինքնաշեն փայտե անբնակ՝ 24 քմ մակերեսով տնակը եւ Շ. Եփրեմյանին պատկանող թիթեղյա վագոն-տնակի տանիքն ու փայտյա կա-

ռուցվածքները՝ 27 քմ մակերեսով:

Հրդեհ մանկապարտեզում



Փետրվարի 17-ին, ժամը 18.26-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Նալբանդյան 104-րդ հասցեում՝ թիվ 1 մանկապարտեզում:

Դեպքի վայր է մեկնել երեք մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 19.03-ին, մարվել՝ 19.04-ին: Մանկապարտեզի առաջին հարկում այրվել են 35 քմ մակերեսով հատակը եւ մանկական գույք:

ԼՂ ՓՇ

Լրափակված կենտրոն

Հրդեհներ

Փետրվարի 13-ին հրդեհ է բռնկվել Ստեփանակերտի Բաղրամյան 3 հասցեում: Այրվել են 0,6 հա չոր խոտ եւ քփուտ:

Փետրվարի 16-ին հրդեհ է բռնկվել Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղում: Այրվել է 2 հա չոր խոտ:

Ջենք-գինամբերք

Փետրվարի 12-ին Մարտունու շրջանի ճարտար գյուղի մոտակայքում հայտնաբերվել է զինամթերք՝ ՄՈՆ տիպի 1 ական եւ հակատանկային 3 արկ:

Զինամթերքը տեղում վնասագերծվել է սակրավորների կողմից:

Փետրվարի 19-ին Ստեփանակերտի «Սանմաքրում» ՓԲԸ-ից ահազանգ է ստացվել, որ քաղաքային կենտրոնական աղբամոցում հայտնաբերվել է ական: Դեպքի վայր մեկնած փժ սակրավորները հայտնաբերել են առանց պայթուցիչի հակատանկային ական, որը տեղափոխվել է անվտանգ վայր:

Տեղափոխվեց վերակենդանացման բաժին

Փետրվարի 15-ին, ժամը 19.15-ի սահմաններում ահազանգ է ստացվել, որ Ստեփանակերտի Դեքիմյան 11 հասցեում բնակվող Ա. Պողոսյանը երկար ժամանակ չի արձագանքում դռան զանգերին:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը հայտնաբերել է Ա. Պողոսյանին շնչափող վիճակում: Բնակարանում միացված էր գազօջախը: Տուժածին ցուցաբերվել է առաջին օգնություն, որից հետո նրան տեղափոխել են հանրապետական հիվանդանոցի վերակենդանացման բաժին:

Նախա եղիագարյան

սեյսմիկ պաշտպանություն

Փետրվարի 12-18-ը ՄՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են չորս թույլ երկրաշարժ: Դրանք տեղի են ունեցել փետրվարի 18-ին Աշոցք քաղաքից 5 կմ հյուսիս-արեւմուտք, եւ ուժգնություններն էպիկենտրոնային գոտում կազմել են 3 բալ:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է երկու թույլ երկրաշարժ: Փետրվարի 16-ին Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտից 40 կմ հյուսիս-արեւմուտք տեղի է

ունեցել 3 բալ ուժգնությամբ սեյսմիկ ցնցում: Նույն ուժգնությամբ երկրաշարժ է գրանցվել փետրվարի 17-ին Ադրբեջանում (Նախիջեւան), Նախիջեւան քաղաքից 35 կմ հարավ-արեւելք:

Տարածաշրջանից դուրս. տեղի է ունեցել 6 եւ ավելի մագնիտուդով վեց ուժեղ երկրաշարժ, որոնք գրանցվել են խաղաղօվկիանոսյան օղակածե հրե գոտում: Շարունակվում է սեյսմիկ ակտիվությունը Ինդոնեզիայի ափամերձ գոտում, որտեղ փետրվարի 12-ին գրանցվել են 6,2, 6,0 եւ 6,3 մագնիտուդներով

ուժեղ երկրաշարժեր: Երկու շաբաթվա ընթացքում այս հատվածում տեղի ունեցած երկրաշարժերի հետեւանքով գոհվել է մեկ մարդ, վիրավորների թիվը հասնում է 264-ի: Փետրվարի 15-ին Պերուի հյուսիսային ափամերձ հատվածում գրանցվել է 6,1 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Փետրվարի 17-ին եւ 18-ին Նոր Զելանդիայի Կերմադեկ կղզիների շրջանում տեղի են ունեցել համապատասխանաբար 6,0 եւ 6,9 մագնիտուդներով ուժեղ երկրաշարժեր: Ձոռեր եւ ավերածություններ չկան:

ՄՊԱԾ գործակալություն

Հտապօգնություն 1-03 երևան

Անցած շաբաթ Հտապօգնության ծառայությունն արձագանքել է 2926 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 341 մարդ: Եղել է մանկական 292 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 28 երեխա:

Գրանցվել են 24 մահ եւ 12 դժբախտ պատահար:

Փետրվարի 13

Մոսեի 13 հասցում բարձրությունից ընկել եւ գլխի վնասվածքով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 39 տարեկան Արմենը:

Ռուբինյան 2/8 հասցեում տեղի ունեցած վթարի հետեւանքով 23-ամյա Վ. Առաքելյանը ստացել է աջ ազդրի վզիկի կտրվածք եւ տեղափոխվել «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Փետրվարի 14

Տիգրան Մեծի պողոտայի մի հասցեից երակների կտրվածքով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 15-ամյա Կ. Ս.-ն:

Լեւոնգրադյան փողոցում տեղի ունեցած վթարի հետեւանքով 27-ամյա Ա. Սարգսյանը ստացել է վնասվածքներ եւ տեղափոխվել «Արմենիա» բժշկական կենտրոն, իսկ Պռոշյան

սովխոզի մոտ վթարի ենթարկված 49 տարեկան մի տղամարդ մահացել է:

Դեղորայքային թունավորումով վերոնշյալ բժշկական կենտրոն է տեղափոխվել նաեւ Մայիսի փողոցի 9 շենքի բնակիչ, 39 տարեկան Աստղիկը, իսկ Մխիթար Գոշի 2-րդ նրբանցքի 5 տան բնակիչ, ժավելի սպիրտից թունավորված 3 տարեկան Ա. Հայրապետյանը տեղափոխվել է «Սբ. Աստվածամայր» բժշկական կենտրոն:

Փետրվարի 15

Շիրազի փողոցի մի բնակիչ երակների կտրվածքով տեղափոխվել է թիվ 1 համալսարանական հիվանդանոց:

Փետրվարի 16

Քեռու 75 հասցեից այրվածքներով այրվածքների կենտրոն է տեղափոխվել 1,5 տարեկան Գ. Վալտերյանը:

Դանակահարման հետեւանքով ստացած մարմնական վերքերով «Էրեբունի» բժշկական կենտրոն են տեղափոխվել 70-ամյա Է. Գրիգորյանը եւ 47-ամյա Ա. Բադալյանը:

Փետրվարի 17

Արցախի փողոցում տեղի ունեցած վթարի հետեւանքով 26-ամյա Ա. Համբարձումյանը, 38-ամյա Ռ. Մարտիրոսյանը, 35-ամյա Լ. Նազարյանը եւ 57-ամյա Վ. Մկրտչյանը ստացել են թեթեւ մարմնական վնասվածքներ եւ բուժօգնություն ստանալուց հետո հրաժարվել հիվանդանոց տեղափոխվելուց:

Փետրվարի 18

Պարոնյան փողոցում տեղի ունեցած վթարից տուժել է 57-ամյա Գ. Պետրոսյանը, որը գլխուղեղի սալջարդով տեղափոխվել է «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

եղանակի տեսություն

Փետրվարի 12-ին, 17-18-ը առանձին շրջաններում դիտվել են տեղումներ մինչեւ 9 մմ (Տաշիրում՝ 13 մմ):

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Տավուշում, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ +14...+19, Արարատյան դաշտում՝ +12...+17, Լոռիում եւ Սյունիքի նախալեռներում՝ +8...+13 (Գորիսում՝ +16), լեռնային շրջաններում՝ +2...+7 °C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շր-

ջաններում՝ -7...-12 (Մասրիկում՝ -16, Աշոցքում՝ -15), Լոռիում՝ -3...-8, Սյունիքի նախալեռներում՝ -1...-6, Տավուշում եւ Արարատյան դաշտում՝ -4...+1, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ 0...+5 °C:

Փետրվարի 20-ին, 24-ին սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ, 21-22-ը ամենուրեք, 23-ին տեղ-տեղ սպասվում են տեղումներ, լեռնային եւ նախալեռնային շրջաններում՝ ձյան

տեսքով: Քամին հարավ-արեւմտյան՝ 5-10 մ/վրկ, 20-ին տեղ-տեղ ուժգնացում՝ 15-20 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 21-ի գիշերը կբարձրանա 7-10 աստիճանով, 24-ի գիշերը կնվազի 4-6 աստիճանով, ցերեկը կբարձրանա 2-4 աստիճանով:

Մայրաքաղաքում փետրվարի 20-ին, 24-ին սպասվում է առանց տեղումների եղանակ, 21-22-ը սպասվում են, իսկ 23-ին հնարավոր են տեղումներ:



«Փրկություն» դրաման ամբողջությամբ ապրած...



1992 թ. վաղ գարունն է: Պատերազմ: Փախստականներին Շահունյանից երեւան տեղափոխող ուղղաթիռը խփվում է Քելբաջարի շրջանում եւ ընկնում լեռները՝ 3200 մ բարձրության վրա: Բռնի տեղահանված մարդիկ, որոնց արդեն թվում էր, թե ամուր կառչել են փրկության դեպի իրենց մեկնած ձեռքերից, կրկին հայտնվեցին գերության մեջ (լեռների ու ձյան գերության) հակառակորդի տարածքում...

Ասա, որ փրկարարի մասնագիտությունը հերոսականություն է պահանջում, բայց որպեսզի ասածդ հերթապահ խոսքի պես չհնչի ու բնորոշի հենց փրկարարին, ավելացրու նաեւ «պարբերական» բառը: Պարբերական ճիշտ այնքան, որքան եւ մեզ ուղեկցող աղետները: Այդպես էլ ասա: Մանավանդ, որ խոսքդ հիշատակի խոսք է արդեն ու, այդ տխրալի հանգամանքի գորու, կարող է նաեւ գնահատանք պարունակել: «Սպիտակ» փրկարարական ջոկատի հրամանատար Նելսոն Թամամյանն այլեւս ընտանիքի, ընկերների, իրեն ճանաչողների հետ չէ... ընթացքն ավարտված է ու բնորոշելի...

«Փրկություն» կոչվող դրաման երկու գործող անձ ունի, երկու մասնակից՝ փրկողը եւ փրկվողը: Նելսոն Թամամյանը մեր այն փրկարարներից էր, որի Փորձն Ամփոփում- ճանաչում էր եւ մեկին, եւ մյուսին: Այդպիսիք, որպես փրկարար, առավել Ամբողջական էություն են: Ավելի

պարզ էությամբ փրկարար:

Ծնվել է 1948-ին Ջավախքում, ուսուցիչների ընտանիքում, ավարտել Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոտեխնիկայի ֆակուլտետը, աշխատել Երեւանի ֆիզիկայի ինստիտուտում:

1976-ին առաջին անգամ, որպես սկսնակ, մեկնեց Կովկաս՝ ալպինիստական ճամբար, հրապուրվեց լեռներով եւ ամբողջ կյանքը նվիրեց այդ գեղեցիկ մարզածեփին:

Տարիների ընթացքում նվաճեց Կովկասի, Պամիրի, Տյանշանի, Ալպերի գագաթները:

1982-ին հանրահայտ «Ջայլիկ» ճամբարի հրահանգիչների դպրոցի սան դարձավ, 2-րդ կարգի հրահանգիչի որակավորմամբ ավարտեց այդ դպրոցը:

Սպորտի վարպետության թեկնածու էր:

Մանկավարժական տաղանդ ուներ. սաները ոտամավորներ էին նվիրում ուսուցչին:

Կարողանում էր «վարակել» իր օրինակով: Ֆիզիկոսները հերթով հետևում էին նրան. ի վերջո հիմնեց ֆիզիկայի ինստիտուտի ալպինիստական ակումբը, որի ամփոփոխ ղեկավարն էր:



Այնուհետեւ 1984 թիվն է: Շրջադարձ էր, թե... այնուամենայնիվ, ամբողջացում... ահա թե ինչու փրկարար Նելսոն Թամամյանի մասին խոսելիս պարտադիր է «էություն» բառը: Կենսագրությունն է պարտադրում, գիտակցված ու նաեւ՝ ենթագիտակցության խորքերից խոսող ճակատագիրը: Լեռնափրկարարը «հեռու» չէ, իհարկե, ալպինիստից, բայց ռոմանտիկան, անխառն, գրեթե բնական գեղեցկությունը լոկ վերջինիս արժանի արդու-զարդն են... ու կրկին մի «բայց».



Հայ լեռնափրկարարների առաջին խումբը ռուս մասնագետների հետ, 1986 թվական: Չախից ութերորդը Նելսոն Թամամյանն է:

Նելսոն Թամամյանն ամեն ինչ ամբողջության մեջ տեսնելու բնատուր ունակություն ուներ եւ ամբողջականացնելու-լրելու կիրք: Հատկապես ալպինիզմը, լեռնագնացությունն է այն դպրոցը կամ, դառնալով վերոնշյալին, այն դրաման, որտեղ սովորում են նաեւ... փրկվող լինել: Այս ամենն ահա՝ ենթագիտակցություն, ճակատագիր, ճակատագրին ընդառաջ գնալու կամք, կիրք առ ամբողջական ու կատարյալ առանձին-առանձին ու միասին վերցրած գուցե կարող են բացատրել Նելսոնի 1984-ին լեռնափրկարարի որակավորում ստանալու որոշումը: Եվ այդ որոշման իրականացումը:

Ավելի խորքերը նայելու ցանկություն լինի՝ կարելի է տեսնել նաեւ նախախնամության հետքերը. ընդամենը չորս տարի հետո լինելու էր այն, ինչ եղավ... Իսկ մինչեւ դա, 1986-ին, Նելսոնը «հասցրեց» լեռնագնացության ակումբի տղաների համար լեռնափրկարարական դասընթացներ կազմակերպել՝ հրավիրելով մասնագետներ Ռուսաստանից: Նա վաղուց արդեն «սովորական» ալպինիստից վերաճել էր իսկական նվիրյալի ու նպատակասլաց գործունեու-

թյուն էր ծավալել հանուն... Լրջագույն դասընթացներ էին: Հին ծանոթի դիմագծեր առած ձեւականությունը նման գործում բացառվում էր իսպառ: Փորձությանը կարողացան «դիմանալ» միայն 12 հոգի, որոնք եւ ստացան լեռնափրկարարի որակավորում:

Քիչ էին, բայց անգնահատելի՝ իրենց փորձով, որն անհրաժեշտ եղավ Սպիտակում եւ Լեւոնակում... Գերմանական կարմիր խաչի ներկայացուցիչները տեսնելով տղաների աշխատանքը, առաջարկեցին Հայաստանին ուղղված օգնության շրջանակներում ստեղծել փրկարար ջոկատ, որը առաջինն էր ամբողջ սովետական միությունում: Ֆինանսական հատկացումներ արվեցին: Հիմնադրվեց «Սպիտակ» փրկարարական ջոկատը, որի ակունքներում, բնականաբար, նաեւ Նելսոն Թամամյանն էր. ջոկատի հիմնադիրներից եւ ղեկավարներից միջեւ օրս...

Ջոկատի կազմում մասնակցել է բազմաթիվ փրկարար աշխատանքների Հայաստանում եւ Հայաստանից դուրս:

Երկրաշարժին հաջորդեց պատերազմը, որի ընթացքում

կազմակերպած փրկարարական աշխատանքների համար պարգևատրվել է «Ադմիրալ Իսակով» մեդալով...

Վերը հիշատակված դեպքը՝ 1992 թ. վաղ գարունը թշնամու տարածքից աղետյալներին փրկելը եւ հայրենիք վերադարձեցնելը, որը հնարավոր եղավ միայն ջոկատի պրոֆեսիոնալիզմի շնորհիվ, եզակի չէ...

1991-ի վերջին որոշում կայացվեց ստեղծել Արտակարգ իրավիճակների վարչություն:

Նորաստեղծ վարչության կազմում բոլոր փրկարարական աշխատանքներին անգնահատելի մասնակցություն է բերել «Սպիտակ» ջոկատը:

Նելսոն Թամամյանի սլացքն ընդհատվեց, բայց գործը, որի մեջ նա դրել է իր էությունը, կշարունակվի: Շարունակելու են ընկերները, շարունակելու է որդին՝ Վահեն, որն ավարտելով ֆիզկուլտուրայի ինստիտուտի փրկարարական ֆակուլտետը, 1997-99 թթ. աշխատեց փրկարար վարչությունում, այնուհետեւ սկսեց զբաղվել արկածային տուրիզմի կազմակերպման գործերով... Երեւի, ճիշտ ինչպես հայրը՝ փորձելով ընդգրկել դրամայի բոլոր շերտերը...

Հայերը Մոլդովայում

<<< 1 Այս կենտրոնը աղետյալ երկրից եւ ՆԱՏՕ-ի աղետների արձագանքման եւ համակարգման կենտրոնից պետք է ստանար միջազգային օգնության հայցման տեղեկատվություն եւ փոխանցեր օգնության տրամադրման իր առաջարկը: Տեղեկատվությունը վարժանքի ընթացքում փոխանցվում էր էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով: Բոլոր սենյակներն ապահովված էին նոթբուքներով, որոնք միացված էին համակարգչային ցանցի: Ջուզահեռ աշխատում էր ԳԻՍ խումբը, որն ըստ երկրներից ներկայացվող հայտերի մասնակիցներին

տրամադրում էր ԱԻ տեղանքի քարտեզներ:

Ըստ սցենարի՝ մոլդովական կողմը ներկայացրեց, որ Ռումինիայի սահմանամերձ տարածքում տեղի է ունեցել երկրաշարժ, որն ավերածություններ է առաջացրել նաեւ Մոլդովայում: Մոլդովան ի վիճակի չէ սեփական ուժերով իրականացնել որոնողափրկարարական աշխատանքներ եւ դիմում է միջազգային հանրությանը՝ օգնություն տրամադրելու հայցով: Այս փուլում հայկական կողմը որպես օգնություն առաջարկեց որոնողափրկարարական մեկ թիւ. մոլդովական կողմն ընդունեց առաջարկը: Ինչպես պատմում են

հայկական պատվիրակության անդամները՝ առաջին եւ երկրորդ փուլերն անցան ծանր ու միապաղաղ:

Վարժանքն ավելի հետաքրքիր անցկացնելու եւ մասնակիցների օպերատիվ արձագանքման ունակությունները բարձրացնելու նպատակով մեր պատվիրակությունը, ՔՌԱՄ մենեջերի համաձայնությամբ, 2-րդ փուլի ավարտից առաջ վարժանքի անցկացման նախաձեռնությունը վերցրեց իր ձեռքը եւ մասնակիցներին ներկայացրեց մեկ այլ, չնախատեսված սցենար՝ արտակարգ իրավիճակ Հայաստանի տարածքում: Որպես ԱԻ ընտրվեց Ազատի ջրամբարի պատվարի փլուզումը, ինչի հետևանքով ստեղծվել է աղետալի ջրածածկման գոտի, վթարվել են հեռահաղորդակցման, կոմունալ

եւ էներգետիկ համակարգերը: Հայաստանի իշխանություններն իրականացնում են որոնողափրկարարական եւ անհետաձգելի փրկարարական աշխատանքներ, սակայն ուժերը եւ միջոցները բավարար չեն: Օգնության խնդրանքով Հայաստանը դիմում է միջազգային հանրությանը, մասնավորապես՝ տրամադրել ջրափրկարարական խմբեր եւ ջրի մաքրման կայաններ:

Այս անակնկալը հանկարծակիի բերեց մասնակիցներին, բայց նրանք բավական արագ կարողացան կողմնորոշվել եւ Հայաստանին օգնություն տրամադրելու գործում ցուցաբերել համապատասխան արձագանքում:

Գրեթե բոլոր երկրներն առաջարկեցին իրենց օգնությունը: Իրավիճակը զարգացվեց նաեւ

մի շարք այլ միջանկյալներով:

Չեռագայում, վարժանքի ամփոփման ժամանակ ՔՌԱՄ ծրագրի մենեջերը հայտարարեց, որ հայկական կողմի նախաձեռնությունը բավական տեղին էր եւ նպաստեց մասնակիցների պրոֆեսիոնալիզմի բարձրացմանը, աշխուժացրեց միջոցառման միապաղաղ ընթացքը եւ ի հայտ բերեց միջազգային համագործակցության նոր ուղիներ: ՔՌԱՄ մենեջերի այս միտքն իրենց ելույթներում հաստատեցին Բուլղարիայի, Ռումինիայի եւ Ուկրաինայի պատվիրակները:

Վարժանքի ընթացքում ցուցաբերած ակտիվության համար ՀՓԾ պատվիրակությունն արժանացավ կազմակերպիչների եւ մասնակիցների բարձր գնահատականին:



Գերմանացիները Յարավային Կովկասում



Այս օրերին «Արտակարգ իրավիճակների կանխարգելումը Յարավային Կովկասում» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում Երևանում է գտնվում Բոննում ՄԱԿ-ի համալսարանի գիտնական Ալեքսանդր Ֆեկետեն: Այցի հիմնական նպատակը Յայաստանի փրկարար ծառայության ծրագրում ընդգրկված ստորաբաժանումների, ինչպես նաև Յայաստանում գործող միջազգային տար-

բեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ժամօրությունն էր: Բազմաթիվ հանդիպումների շարքում Ալեքսանդր Ֆեկետեն եղավ նաև «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնում: Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության (ԳՏՀ) հետ ԱԻՆ Յայաստանի փրկարար ծառայությունը համագործակցում է արդեն հինգ տարուց ավելի: Ներկայումս ըն-

կերությունը Յայաստանում իրականացնում է Գերմանիայի Դաշնային Յանրապետության կառավարության «Արտակարգ իրավիճակների կանխարգելումը Յարավային Կովկասում» տարածաշրջանային ծրագիրը, որտեղ ընդգրկված են Տավուշի եւ Լոռու մարզերը: Ծրագրի գլխավոր նպատակն է բարելավել Յարավային Կովկասի առավել վտանգված համայնքների՝ բնական աղետների հետևանքներից պաշտպանվելու կարողությունները: Ծրագրի հիմնական խնդիրներն են.

- տեղական եւ միջազգային գիտելիքների մեկտեղում.
• Լոռու եւ Տավուշի մարզերում վտանգների ու ռիսկերի գնահատում.
• վտանգների ու ռիսկերի տեխնիկապես հագեցած մոնիթորինգի կազմակերպում բնակչության մասնակցությամբ.
• բնակչության տեղեկացման տեխնիկապես հագեցած համակարգի ստեղծում:
Գերմանական ծրագրի առջեւ դրված խնդիրների իրականացման կարելու բաղկացուցիչներից մեկը համայնքներում վաղ ազդարարման համակարգի հիմնումն է, որը չի կարող արդյունավետ գործել առանց բնակչության եւ արծագանքող մարմին-

ների իրագրվածության բարձրացման: Այդ նպատակով նախատեսվում է Տավուշի եւ Լոռու մարզերում գերմանական կողմի աջակցությամբ ստեղծել համարային իրագրված կենտրոններ, որոնք կարող են դառնալ համայնքներում առկա վտանգների վերաբերյալ տեղեկությունների կուտակման, վերլուծությունների, շահագրգիռ կողմերի մասնակցությամբ հանդիպումների ու խորհրդակցությունների, իսկ արտակարգ իրավիճակների դեպքում նաև բնակչության, լրատվամիջոցների եւ արծագանքող ուժերի համար տեղեկատվության վստահելի աղբյուր:

«Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի տնօրեն, փժ գնդապետ Նիկոլայ Գրիգորյանն օտարերկրյա փորձագետին ներկայացրեց կենտրոնի կառուցվածքը, գործառույթները, իրականացված ու ապագա ծրագրերը: Ծանոթանալով կենտրոնի գործունեությանն ու շրջելով նկարահանման տաղավարում՝ Ալեքսանդր Ֆեկետեն իր հիացմունքը հայտնեց տեսածի ու լսած վերաբերյալ: Նա նշեց, որ նույնիսկ եվրոպական զարգացած երկրներում, որոնք զգալի գումարներ են հատկացնում արտակարգ իրավիճակներ-

րի կառավարման գործին, չկա մի այսպիսի կառույց, որտեղից մարդիկ կարող են լիարժեք տեղեկություններ ստանալ իրենց սպառնացող վտանգների մասին, իսկ լրատվամիջոցներն ու մամուլի պատասխանատուները՝ սովորել, թե ինչպես պետք է լուսաբանել արտակարգ իրավիճակները: Մարդկանց մի մասը հետևում է եղանակի կանխատեսումներ հեռարձակող հեռուստաալիքներին, մյուսները՝ հարեւանների ու ծանոթների խորհրդին, երրորդները՝ հրշեջներին եւ այլն: Դեպքեր են եղել, երբ բնակիչները միավորվել են ու սեփական նախաձեռնությամբ ստեղծել ինտերնետային կայքեր, որտեղ ներկայացվում են, օրինակ, հնարավոր ջրհեղեղների ու դրանց դեպքում վարքականոցների մասին տեղեկություններ: «Արտակարգ ալիքը» հնարավորություն է տալիս «խոսել մեկ ձայնով» ու բնակչությանը եւ զանգվածային լրատվամիջոցներին մատուցել հավաստի տեղեկատվություն: Գերմանացի փորձագետը խոստովանեց, որ այս հարցում «Արտակարգ ալիքը» բավական առաջ է գնացել, ու կենտրոնին մաղթեց նորանոր հաջողություններ:

Գոհար Բաղդասարյան

Բրուցելոզ. կենդանիները վարակում են մարդկանց

Առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության տվյալներով բրուցելոզով հիվանդանալու դեպքերը Յայաստանի հանրապետությունում տարեցտարի շատանում են. 2007 թվականի համեմատ անցած տարի՝ 2008-ին՝ դրանց թիվն աճել է 1,1 անգամ, գրանցվել է 200-ից ավելի դեպք: Պատճառներից մեկն այն է, որ մեր բնակչությունը չի ձերբազատվել փողոցից, պատահական վայրերից ու պատահական մարդկանցից կաթնամթերք եւ միս գնելու սովորությունից:

Գիյները բրուցելաններն են, որոնք ջրում ապրում են 5 ամիս, կաթում՝ 45 օր, պանրի մեջ՝ 60 օր, սառեցրած մսում՝ 5 ամիս, կաշվում՝ 2 ամիս, բրդի մեջ՝ 3-4 ամիս: Եռացնելիս բրուցելանները վերանում են անմիջապես, պաստերիզացնելիս՝ 5 րոպեում: Առավել հաճախ բրուցելոզով հիվանդանում են տնային կենդանիները՝ կովերը, ոչխարները, այծերը, խոզերը: Կենդանիների դեպքում հիվանդության մասին հուշում են նրանց անկումները կամ մահացած պտղի ծննդաբերումն ու վիժումները: Բրուցելանները արտաքին աշխարհ են դուրս գալիս կաթի, մեզի ու պտղի միջոցով: Հիվանդ կենդանու միսը հարուցիչներ նույնպես պարունակում է: Մարդը կարող է վարակվել նույնիսկ հիվանդ կենդանու կաշին կամ բուրդը մշակելիս:

մկաններում եւ հողերում, դժվարաշարժություն, ջարդվածության զգացողություն: Հիվանդությունը տևում է միջինը 3 ամիս, բայց կարող է երբեմն տևել 1-2 տարի կամ ավելի: Արդյունքում

հուրդ է տալիս չզբաղվել ինքնաբուժությամբ, այլ բժշկի դիմել ախտահիշերի հայտնվելուց անմիջապես հետո, որպեսզի ցուցաբերվի համապատասխան բժշկական օգնություն՝ հետա-



ախտահարվում են արյունատար, նյարդային, սրտանոթային համակարգերը, հենաշարժական, ոսկրահողորային ապարատները: Յնարավոր են նաև հաշմանդամություն, հոգեկան խազարում, հղի կանաց մոտ՝ պտուղի վիժում: Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության գլխավոր մասնագետ Լիանա Թորոսյանը մարդկանց խոր-

գայում բարդություններից խուսափելու համար: Ավելի հեշտ է կանխարգելել հիվանդությունը, քան հետո բուժել ու վերացնել հետևանքները: Դրա համար նախ եւ առաջ պետք է հետևել անձնական հիգիենայի կանոններին, կենդանիների հետ շփվելուց հետո անպայման օժառով մանրակրկիտ լվանալ ձեռքերը, անասուններին խնամելիս օգտագործել

առանձին արտահագուստ: Չի կարելի գնել միս, կաթ ու կաթնամթերք պատահական վայրերից ու մարդկանցից: Գործարանային արտադրության կաթնամթերքն ավելի ապահով է, որովհետեւ անցնում է մշակում՝ համապատասխան ջերմային պայմաններում: Ոչ թե փողոցում, այլ խանութներում վաճառվող միսն է անվտանգ, որովհետեւ համապատասխան ստուգում է անցնում: Բրուցելոզից խուսափելու համար տնային պայմաններում ստացվող կաթն օգտագործելուց առաջ հարկավոր է եռացնել: Ամենազգույշը պետք է լինել պանրի դեպքում, որովհետեւ այն պատրաստվում է հում կաթից:

Պետք չէ նաև կենդանիների խնամքի գործում ներգրավել երեխաների ու հղի կանանց: Եթե կենդանիների մեջ հիվանդության դեպքեր են գրանցվում՝ հարկավոր է անհապաղ միջոցներ ձեռնարկել:

Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության ուսումնասիրությունները վկայում են, որ Յայաստանում բրուցելոզով հիվանդանում են հիմնականում մեծահասակները: Հիվանդացության միայն 10 տոկոսն է բաժին ընկնում երեխաներին: Մինչ օրս, սակայն, բրուցելոզից մահացության դեպք Յայաստանում չի գրանցվել: Կյանքի համար հիվանդությունն այնքան էլ վտանգավոր չէ, բայց փոխարենը բերում է աշխատունակության կորստի, եթե ժամանակին չի ցուցաբերվում համապատասխան բուժօգնություն:

Աճի Ստեփանյան



Փորձագետների հերթական հավաքն սկսված է: Երկրա են բոլոր անդամները. հար եւ նման ինը «մուսաներին», որոնք «հովանավորում»-ը եկավարում են կյանքի «ճյուղերը», ուղղություն տալիս նրա ընթացքին... Առաջինը հնչում է բժշկագետ Կրատի ճառը, որն ամբողջությամբ նվիրված է բնագավառի նորագույն նվաճումներին ու դրանց կիրառմամբ շարունակվող գիտափորձերին:

Նա պնդում է, որ դրանք առաջին հերթին առողջապահական նպատակներ են հետապնդում, եւ որ հաջողություններն արդեն իսկ ակնհայտ են:
Այդուհանդերձ, ուշադրության կենտրոնում Իսակի խոսքն է: Հատկապես այդ խոսքին են սպասում Փորձագետները:

Սկզբը՝ 263-277 համարներում
5.

Իսկ Կրատը խոսում էր: Խոսում էր՝ հընթացս առույգանալով ու ոգետրվելով, ձեռքերը չափավոր թափահարելով, հայացքով ընդգրկելով մոտիկն ու հեռուն, ասես դիմելիս լինել ոչ թե ընդամենն ինը հոգու, այլ բազմահազարանոց մի լսարանի... Բազմաթիվ գիտական եզրեր էր գործածում, ինչ-որ կետեր էր առանձնացնում ու կարեւորում, հուզվում էր ու խաղաղվում. կարելի էր ստանալ այն տպավորությունը, թե նրա ճառի նպատակը հենց նույն այդ ճառն է, այլ ոչ՝ դրանում արծարծվող թեման...


Ավարտեց: Նրան շրջապատում էին նույն անվորով դեմքերը: Իսկ Սյորենը կարծես բացակա էր: Աչքերի մեջ առավոտվա անորոշությունն էր: Կամ անանունությունը: Նա չէր կարողանում հասկանալ: Հիմնականը՝ նպատակը: Այս ամենի նպատակը: Չէր կարողանում հասկանալ՝ սա իրականությունն է, թե պատրանք, խաղ է, այնուամենայնիվ, թե... Ի՞նչ... Ո՞րն է խաղի հակառակը... Չկա նման բան: Ուղղակի կարելի է խաղալ եւ լրջորեն, եւ կատակով: Ահա եւ ամբողջ տարբերությունը: Երկու դեպքում էլ խաղ է: Այսինքն՝ ընտրելու հնարավորություն չկա: Իսկ եթե ընտրելու հնարավորություն չունեն, ապա տվյալ դեպքում, մասնավորապես, դու չես խաղացողը, քեզ խաղարկում են... Մեզ խաղարկում են... Ովքեր: Գուցե հենց դա է նպատակը. իմանալ: Որ ինչ...

Ու մինչեւ նա փորձում էր հասկանալ կամ անուն տալ իր չհասկացածին, այդ անանունը շարունակում էր իր խաղաղ ընթացքը: Արտաքուստ գոնե՝ խաղաղ:

- Ասելիք ունե՞ք, - հնչեց Ալեքսանդրի ձայնը:

Չունեին: Նրանք սպասում էին Իսակի խոսքին: Կրատի ճառը, ճառի նյութը որքան էլ արդիական լինեին, չէին կարող ունենալ առանցքային այն նշանակությունը, որ ուներ Իսակի շոշափած թեման: Այս դեպքում

նույնիսկ տեղին էլ չէ դա նման չեզոք բառով անվանելը. «թեմա»: Ոչ էլ «շոշափելն» է տեղին: Ստեղծված կացության մեջ դա ամենակարեւոր խնդիրն էր. մոլորակի ապագան, ինչպես սիրում էին արտահայտվել ամենուր, տեսականորեն կամ գործնականում դրան առնչվողներն ու չառնչվողները: Թեպետ դժվար է պատկերացնել ապագային չառնչվող որեւէ մեկին... Թե սխալ է նման պնդումը, ու դա էլ այս կամ այն դիտակետի որոշելիք բանն է ընդամենը, այդպես: Միգուցե, միգուցե... թվում էր, չէ, ինչ թվալ, կար հստակ համոզվածություն, որն ուղղակի ծածանվում էր օդում, որ ամեն ինչ հնարավոր է այլևս: Այնքան շոշափելի էր այդ հնարավորությունը, այնքան տեսանելի, որ



մատնում էր իր վերժամանակյա բնույթը. կարծես հանդիմանելիս լինե՞ր՝ եւ մշտակա եմ, եւ եղել եմ ձեզանից առաջ ու կլինեմ հետո, երբ դուք այլևս... երբ ոչինչ այլևս չի լինի... պարզապես չեք նկատել, ինչո՞ւ, հարցրեք ինքներդ ձեզ...

- Ասելիք չունենք, - դարձյալ Ալեքսանդրն էր: Իրեն էլ ընդգրկեց, - եւ դա ճիշտ է: Ինչո՞ւ ավելորդ խոսել: Ամեն խոսք՝ իր ժամանակին: Նախեւառաջ՝ հիմքեր: Տարածություն, հետո նոր միայն նրա վրա ծավալվող դեպքեր. կյանքը... Դեռ կանդրադառնանք այդ ամենին: Իսկ այժմ, հարգարժան Իսակ, լսում ենք քեզ, - ավարտեց Ալեքսանդրն ու հայացքը հառեց բնագետին:

Իսակը գլխով նշան արեց, որ նշանակում էր՝ այո, պատ-

րաստ եմ: Ապա չգիտես ինչու դանդաղ աչք ածեց չորս բոլորը, նույնիսկ թեթեակիորեն հետ շրջվեց մի պահ, եւ այնպիսի մի հայացքով, որ կարծես հարցնում էր՝ ինչից բացի ուրիշ մարդիկ չկան շրջակայքում: Չկային: Նայեց կլոր սեղանի շուրջը նստածներին՝ այս անգամ արդեն հապճեպորեն, բայց հասցնելով մեկ առ մեկ որսալ նրանց հայացքները: Շարժուն աչքեր ուներ՝ բների մեջ անհանգիստ պտտվող: Մի կետի երկար նայել չէր կարողանում, ինչի պատճառով էլ անընդհատ թվում էր, թե այդ մարդը հանգիստ չունի, միշտ շարժման մեջ է, նույնիսկ երբ արտաքուստ գոնե անվորով ու խաղաղ նստած էր լինում, ճիշտ ինչպես հիմա:

- Մեծարգո Փորձագետներ, - սկսեց նա, - ուզում եմ, որ գրուցենք: Բառի բուն իմաստով: Խոսեմ ես, խոսեք դուք: Դա ինձ է հարկավոր, դա հարկավոր է նաեւ ձեզ: Ընդհատեք, որտեղ հարմար կգտնեք: Հարցի վերաբերյալ մենք մեր կարծիքներն ունենք, գաղտնիք չէ, այդուամենայնիվ, ես ինչ-որ բաներ ճշտելու կարիքն ունեմ: Բարդագույն իրադրության մեջ ենք հայտնվել: Շտապել երբեք չի կարելի, հասկանում են բոլորը, բայց որ հապաղումն էլ կործանարար է լինելու, արդյո՞ք, բոլորն են... ընդունում, այսպես ասենք: Այսքանը՝ որպես նախաբան: Իսկ հիմա, պարոնայք, ահա սա. մոլորակի տարածությունը սպառված է, - Իսակը կարծես հոգոց հանեց: Գուցե պարզապես շունչ առավ ու լռեց մի պահ: Կրկին շուրջը նայեց...

Սյորենն աչք ձեռքի ափը դրեց ձակատին, դանդաղ տարավ ձախ ու հետ բերեց: Կրկին շարժումը: Հանկարծ հասկացավ, որ ուղեղն ամբողջովին բռնած մշուշը հեռանում է արագորեն... Ահա եւ հետքն էլ չկա: Չէր էլ եղել:

Իսակը շարունակեց.
- Սա փոխաբերությունն է: Առայժմ՝ չէ: Այսինքն՝ տրամաբանության հետեւից գնալով՝ ողջը փոխաբերելու պահանջ էլ կառաջանա, անշուշտ, եւ մենք կփոխաբերենք, չենք երկնչի...

Բայց առայժմ խոսքը վերաբերում է հենց տարածությանը, մոլորակի տարածքին՝ թե կենսական նշանակության եւ թե... ասենք, հիմա եղած ամբողջն է կենսական նշանակության... ու վաղուց, վաղուց է, որ այդպես է տարածությունն, այսպիսով, սպառված է: Լիովին...

Իսակը դարձյալ լռեց: Ասածը նորություն չէր, իհարկե: Փորձագետների համար՝ առավել եւս: Ընդ որում, նորություն չէր եւ որպես իրողություն, եւ որպես ձեւակերպված միտք: Այս դեպքում հենց վերջինին է վերաբերում խոսքը, այսինքն՝ ձեւակերպված մտքին, ինչը միշտ էլ ավելի ազդեցիկ է, հատկապես, երբ կերպավորում է այնպիսի մի բան, որն առողջ տրամաբանությունը կամ բնագոյը գուցե՝ առողջ լինի, թե անառողջ, հրաժարվում է ընդունել: Բայց, բանն այն է, որ այդ «փուլը» Փորձագետները հաղթահարել էին: Որեւէ ընդդիմություն, որը կծագեր անակնկալի հանդեպ, որեւէ դիմադրություն չկար: Որովհետեւ չկար անակնկալը: Խոսքի, մասնավորապես, որոշակի բառակապակցության պարագայում սովորաբար տեղի է ունենում մեկ այլ բան. հաճախակի կրկնելով՝ կարող ես լիովին իմաստագրվել... Անընդհատ արտասանվող միտքը վերածվում է բացարձակապես անընկալելի դարձած անհեթեթության: Իսկ նշյալ անհեթեթությունն արդեն, իր հերթին, կարող է տհաճություն պատճառել: Հասկանալի չլինելու, ավելի ստույգ՝ անհասկանալիության առաջ բերած տհաճ զգացումը... Ահա այսպիսի թնջուկ, որն անասելի չափերի ահագնության էր հասել, ահագնանում էր վայրկյան առ վայրկյան այս պատերի ներսում: Որովհետեւ այստեղ այդ ամենին գուցե մարվում էր եւս մեկ հանգամանք, տվյալ դեպքում՝ գուցե եւ ամենակարեւոր հանգամանքը. պատասխան էր պահանջվում: Պահանջվում էր իրենցից: Պատասխանելը մտնում էր իրենց պարտականությունների մեջ... Ու լռում էին:

- Ի՞նչ անել, - Իսակն էր, հնչեցնում էր այն նույն հարցը, որ հնչել էր հազարամյակներ ի վեր: Այդ հարցը ծնվել էր մարդկության հետ մեկտեղ: Կամ մարդն իր կյանքում ապրելու ուղեցույցներ երբեք չի ունեցել, կամ եղածներն ուղեցույց չեն եղել, եղել են անիրական, անիրագործելի, գուցե՝ մոլորեցնող, վերջապես, իսկ գուցե մարդու

բնույթն է այդպիսին. ինքն ու իր բնագոյներն են միակ ուղեցույցը, որը կարող է գործել առհասարակ... Ահա եւ՝ ծնվելով ու ապրելով տարածության մեջ, լինելու միակ հնարավոր տարբերակը, ավելել է տարածությունը: Ինչպես հասկանալ: Էլ ի՞նչ լուծում, էլ ի՞նչ պատասխան... Հարցը նոր չէր, պատասխանը նոր չէր լինելու: Այստեղ դա լավ գիտեին:

Իսակը պատրաստվում էր շարունակել, երբ նկատեց, որ Հարոնն առաջ է թեքվել ու նայում է իր կողմը: Պարզ էր՝ ուզում է բան ասել: Բնագետը հասկացրեց, որ լսում է:

- Մենք կարող ենք տարածություն ստեղծել, հարգարժան Իսակ, - հարցով սկսեց Հարոնն ու անմիջապես էլ պատասխանեց իր հարցին, - ոչ, մենք չենք կարող... Ես ուզում եմ ասել՝ ոչ թե հիմա, այս իրադրության մեջ, այլ առհասարակ չենք կարող... Ո՞րն է մարդու առաքելությունը: Դա ստեղծելը չէ, համենայն դեպս: Ի՞նչ պիտի ստեղծի մարդը, ստեղծվելիքն արդեն իսկ ստեղծված է, խոշոր հաշվով, իսկ մարդը կարող է միայն հայտնաբերել, որոնել ու գտնել եղածը... Ինչը եւ փորձում ենք անել, կարծում եմ...

- Հայտնաբերենք, հարգելի Հարոն, որ ավելելու բան ունենանք, այո, - նետեց Սյորենն ու անհանգիստ շարժում արեց: Հարոնը հանդարտ ընդունեց ռեպլիկը, որին անդրադառնալու իրավունքը, սակայն, հայացքով թողեց Իսակին:

- Այսինքն, - ասաց Իսակը, բայց Սյորենը դարձյալ մեջ ընկավ:

- Այսինքն՝ մենք հստակ երաշխիքներ ունենք, որ մեր վերաբերմունքը նույնը չի լինելու, ինչպիսին եղել է միշտ, մեր հայտնաբերածների, նաեւ մեր ունեցածների՝ հանդեպ... Չէ, իսկապես, մեր ինչի՞ն է հարկավոր տարածությունը... Հարկավոր լինե՞ր՝ կպահպանեինք, թե՛ միամիտ բան եմ ասում... Եթե ստեղծողը մենք չենք, ուրեմն պիտի ավերենք: Կրե՞ժ, - վերջին բառը մի տեսակ անակնկալ դուրս թռավ. որտեղից հայտնվեց, ինչո՞ւ... աննկատելի, դառը մի ժպիտ ուրվագծվեց Սյորենի դեմքին. փորձում էր հասկանալ, թե այդ երբ, ո՞ր մի շրջադարձի պահին կարող էր «վրեժն» իբրեւ մարդու արարքի անվանում-բացատրություն, սողոսկել իր ենթագիտակցության մեջ...



Էքսպրեմալուրժյունը գրավեց...

Լուսանկարներ, որոնք փոխել են աշխարհը



Սպառնալիք

Փողոցում խաղացող երեխաներից մեկն ատրճանակով սպառնում է տեսախցիկն իր վրա ուղղած լուսանկարչին: Տղան ընդամենը տասնմեկ տարեկան է, իսկ նրա ծեռքի ատրճանակը՝ պարզապես խաղա-

լիք: Նա ուղղակի խաղում է: Սակայն եթե մի փոքր ավելի ուշադիր նայեք տղայի դեմքի արտահայտությանը, ապա կնկատեք, որ այնտեղ արտացոլված չարությունն ամենեւին էլ մանկական չէ:

<<< 1 Արման Վարդանյանը, սակայն, փրկարար դառնալու իր որոշման մեջ վայրկյան անզամ չի կասկածել նույնիսկ այն ժամանակ, երբ սեփական կյանքն է վտանգել:

- Եղել է, երկու անգամ վնասվածքներ է ստացել - ասում է Արմանի կինը՝ Արմինե Ազատյանը, - բայց նույնիսկ դրանից հետո գիտեի, որ չի հրաժարվի իր աշխատանքից: Երբեք էլ դեմ չեմ եղել, որ նա փրկարար լինի, քանի որ գիտեմ, սիրում է իր աշխատանքը, իսկ եթե սիրում ես, ուրեմն՝ նվիրվում ես:

Սկզբում Արմանը որպես փրկարար աշխատում էր Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունում, հետո Երեւանի քաղաքային ջոկատում էր, իսկ 2004 թվականից արդեն Զատուկ փրկարարական ջոկատում ընդհանուր պրոֆիլի փրկարար: Դիմա դժվար է նրան որեւէ դեպքով զարմացնել, անակնկալներ գրեթե չեն լինում:

- Երբ ահագանգը ստանում ենք, մոտավորապես ճշտում ենք, թե ինչ դեպք է, մտքի մեջ որոշակի պլան մշակում: Երբ տեղ ենք հասնում, արդեն կան մեր ենթադրածի չափ բարդ իրավիճակի ենք հանդիպում, կան ավելի թեթև, - պատմում է Արման Վարդանյանն ու նշում, որ գիտելիքն ու լավ տեխնիկան գործի հաջողության գրավականներն են: - Ես միշտ էլ ձգտել եմ ավելին իմանալ, կարծում եմ, ոչ մեկն էլ չի կարող ասել՝ վերջ, էլ բան չկա սովորելու:

Ընկերասեր, համեստ ու համարձակ... Արմանի մասին խոսելիս այսպես են նրան բնորոշում ընկերներն ու գործընկերները: Երեք հատկանիշներն էլ կարելու են փրկարարի համար: Եթե ընկերասեր չլինես, մարդիկ չեն վստահի քեզ, ասում է Արմանը, իսկ վստահությունը նրանց աշխատանքում գործի կեսն է:

- Զատկապես բարձրությունների վրա աշխատելիս կյանքը ընկերոջից է կախված, եթե պարանը կտրվի կամ որեւէ գործիք կտրվի, միայն սատարողը կա-



րող է կյանքը փրկել, - ասում է Արման Վարդանյանը:

Մեկ ամբողջ օր ծառայության, իսկ հաջորդ երեք օրերը՝ հանգստի ժամերն են: Արմանն անհամբերությամբ է սպասում, թե երբ է երեք օրն անցնելու, երբ է նորից աշխատանքի գնալու: Տանն էլ, թեպետ դուստրերը ժամերն են հաշվում, թե երբ է լուսանալու, ու հայրիկն արդեն տանն է լինելու: Զնգամյա Անին ու տասնամյա Ալլան սիրում են հայրիկի հետ համակարգչային

խաղեր խաղալ, հաճախ էլ հաղթում են նրան: Արմանը սիրում է նաև ընտանիքի ու ընկերների հետ բնության գրկում լինել, արշավների դուրս գալ, սա էլ գուցե նրա երկրորդ մասնագիտությունն է, ավելի ճիշտ՝ առաջինի կանչը: Մինչ փրկարար դառնալը Արմանն արդեն բնապահպան էր:

Բնասեր ու մարդասեր՝ ինչ տարբերություն:

Նեկի Զարությունյան



Այս տարվա փետրվարն աչքի ընկավ օդի ջերմաստիճանի բավական բարձր ֆոնով: Ամսվա սկզբից հանրապետության տարածք ներթափանցած արեւադարձային տաք օդային զանգվածները երկրի տարածքում պահպանվեցին մինչեւ փետրվարի 17-ը: Զանրապետության ողջ տարածքում օդի ջերմաստիճանը, հատկապես փետրվարի երկրորդ տասնօրյակում, նորմայից բարձր էր 6-8 աստիճանով, առանձին օրերին՝ մինչեւ 10 աստիճանով: Առավելագույն ջերմաստիճանները դիտվեցին Սյունիքի եւ Տավուշի հովիտներում՝ մինչեւ +18...+20, Արարատյան դաշտում՝ +15...+17 աստիճան տաքություն:

Պետք է կրկին հիշեցնենք, որ նման տաք եղանակը կլիմայական շեղում էր, սակայն ոչ աննախադեպ: Նման տաք փետրվարներ, երբ օդի ջերմաստիճա-

Վրանգն անցավ

նը ցերեկային ժամերին Արարատյան դաշտում տատանվել է +16...+17 աստիճանի սահմաններում, դիտվել է նաև 1979, 1981, 1986, 1996, 2001 թվականներին:

Նման բարձր ջերմային ֆոնի ներքո Արարատյան դաշտում առաջ էր գալիս պտղատուների ծաղկման վտանգ, որը հետագայում կմեծացներ սրանց ցրտահարման հավանականությունը, քանի որ հայտնի է, որ մինչև մարտի վերջին տասնօրյակը Զայաստանի տարածքում հաճախակի են արկտիկական ցուրտ օդային զանգվածների պարբերաբար ներխուժումները:

Սակայն փետրվարի 17-ին սինոպտիկական իրադրությունը երկրի տարածքում կտրուկ

փոխվեց: Թուրքիայի տարածքից մեր հանրապետությունը ներխուժած մթնոլորտային ցուրտ ճակատի ազդեցությամբ օդի ջերմաստիճանը, հատկապես գիշերային ժամերին, փետրվարի 18-19-ը նվազեց 10-15 աստիճանով: Լեռնային շրջաններում նվազագույն ջերմաստիճանները հասան -15...-20, նախալեռնային շրջաններում եւ Արարատյան դաշտում՝ -4...-7: Օդի օրական միջին ջերմաստիճանն ամենուրեք մոտեցավ նորմային եւ պտղատուների ծաղկման վտանգը կանխվեց:

Գագիկ Սուրենյան
Հայաստանի Հանրապետության
օդերևութաբանական
կանխատեսումների
բաժնի պետ

